

ԼԻԼԻԹ ՀՐԱՉԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 03.02.1972
Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լիլիթ Հրաչիկի Հովհաննիսյանը** Երևանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1988 թվականին, ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտել է գերազանցությամբ 1993 թվականին։

1993–1996 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ։

1998 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին» թեմայով (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ա. Ավետիսյան)։

2003 թվականին ստացել է դոցենտի գիտական կոչում։

1996 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ ավագ լաբորանտից հասնելով ավագ գիտաշխատողի պաշտոնի։

1992 թվականից մինչ օրս գիտական աշխատանքը համատեղում է մանկավարժական ու դասախոսական աշխատանքի հետ։

1992-1996 թվականներին աշխատել է Երևանի Գրիգոր Նարեկացու անվան № 137 միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցչուհի։

1995-2011 թվականներին պատմություն է դասավանդել մայրաքաղաքի «Քվանտ» վարժարանում։

2000–2019 թվականներին դասախոսել է Երևանի «Գլաձոր» համալսարանում, 2007–2015 թվականներին նաև եղել է նույն համալսարանի Միջազգային հարաբերությունների և պատմության ամբիոնի վարիչը։

2015–2022 թվականներին դասախոսել է Երևանի պետական համալսարանում։

2009 թվականից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Միջազգային հարաբերությունների, պատմության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս է։

2022 թվականից զուգահեռաբար դասախոսում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետում։

1999–2008 թվականներին ակտիվորեն մասնակցել է միջնակարգ դպրոցի «Պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաների չափորոշիչների ու ծրագրերի, ավարտական և բուհական ընդունելության գնահատման թեստերի մշակման աշխատանքներին՝ իրականացված ՀՀ ԿԳՆ և Կրթության ազգային ինստիտուտի կողմից։

2016–2021 թվականներին անցել է մասնագիտական վերապատրաստման մի շարք դասընթացներ, որոնցից երկուսի արդյունքում ստացել է կրթական ծրագրի որակի ապահովման աջակցի հավաստագիր։ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Միջազգային հարաբերություններ» ՄԿԾ–ի որակի ապահովման պատասխանատուն է։

Գիտական հետաքրքրությունները ներառում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հիմնահարցերը։

Հեղինակ է 2 մենագրությունների, 5 գիտամեթոդական աշխատանքների, ավելի քան 50 գիտական հոդվածների՝ տպագրված հանրապետական և արտասահմանյան հեղինակավոր, այդ թվում՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) ընդգրկված ամսագրերում։

«Հայոց պատմություն» ակադեմիական քառահատորյակի III հատորի երկրորդ և IV հատորի առաջին գրքերի համահեղինակ է։

Գիտական զեկուցումներով, դասախոսություններով ու ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, գիտագործնական սեմինարներում, Հայկական բանակի զորամասերում, միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում։ Մասնակցել է նաև պատմագիտության ու կրթության հարցերին նվիրված բազմաթիվ հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների։

Արժանացել է՝

- Երևանի քաղաքապետի պատվոգրին՝ երեխաների կրթության և դաստիարակության գործում ունեցած ձեռքբերումների համար (2006 թ.),
- ՀՀ ԿԳՆ Շնորհակալագրին՝ անբասիր աշխատանքի համար (2009 թ.),
- ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենության գովեստագրին՝ արդյունավետ գիտական գործունեության համար (2013 թ.),
- ՀՀ ԿԳՆ պատվոգրին՝ կրթության, գիտության ոլորտներում ներդրած ավանդի համար (2015 թ.)։